

իմ պատասխան-քննադատութիւնս լոյս է տեսել աշխարհահռչակ հեփպոսարան և իմ ուսուցիչ Մասպերօի (G. Maspero) տնօրինութեամբ հրատարակուող Recueil de Travaux relatifs à la Philologie et à l'Archéologie égyptiennes et assyriennes հանդէսի 1902 թ. 3-4 միացեալ համարում (եր. 197—198):

Սնդուրում եմ, որ այս նիւթով հետաքրքրողները նեղութիւն չանձն առնեն դիմել ցոյց աւած աղբիւրներէս, որոնք որոշ կերպով կը պարզեն թէ ի՞նչ արժէք ունի այ. Լէմա՛ի քննադատութիւնը:

Կ. Յ. Բասմաջեան

Պարիզ.



ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊՌՕՇԵԱՆ

Ազգագրութիւնը և ցեղագրութիւնը կոչումն ունին ոչ միայն վերաբառնալի նկարագրելի ազգի բնիկ դրոշմը, որով նա նման և տարբեր է միւսներից, այլ և նա այդ դրոշմը իւր այս ու այն դժերով պատկերացնելով՝ առատ և ճշգրիտ նիւթ է մատակարարում գրչի արուեստով պարապուողներին, զեղարուեստի մշակներին՝ իրենց մրցանքի ասպարէզում:

Այդպէս, ազգագրութիւնը խուզարկութեամբ և քննական հետազոտութեամբ որոնում ու որոշում է ազգերի ազգակցութիւնը, ազգակցութեան հեռւոր ու մերձաւոր աստիճանները. քաղաքակրթական յարաբերութիւնները, քաղաքակրթութեան ընթացքը՝ ազգից դէպի ազգ անցած, մի ազգի առաջնութիւնը քան միւսը, մէկի միւսից սերուելը, կիանքի յառաջխաղացութեան ընթացքում նոցա քաղաքակրթական մրցանքը, ազգագրութիւնն՝ յառաջ է բերում այդ բոլորը և ձգտում է այդ բոլորի վրայից փչել թանձր դսրերի փողին:

Եւ երբ նա միանգամ այդպէս կը շողացնէ այդ բոլորը, այն ժամանակ միայն թերևս կարելի կը լինի ճշտիւ իմանալ բնիկ արմատն ազգագրական բազմազարդ ստեղծած, ծագումն ու տեղը նախնական մարդու, սերունդն ու ազգանալը, ցրիւ գնալ՝ և այս ու այն յոեղ գաղութ դնելով բազմազգանալը, այդ ցրիւ գնալու ճիւղաւորուելու շաւիղները մինչև բնակելի երկրի ծայրա-

սահմանները, ապա յետագարձ շարժումը նման ծովածփանքին, որ դալով ու բախուելով անխորտակելի ժայռափերին ընկերկվում է և իջնում, հարթվում, անդորրանում, նորից ուռչելու, նորից լցուելու, նորից շահատակելու ու խօշիւն հանելով նորից բաղ-խելու ընդդիմադիր ժայռափը: Յարատե բախումն և յարատե փըշ-րումն և նորից վերակազմումն և այդպէս անվերջ:

Ազգերի ծագումը, յարաճուն շարժումը, դարգացումը—գիւ-տերով, արուեստներով, շինողական ճարտարագործութեամբ, տարազներով, կենցաղավարական նիստ ու կացով, օրէնքնե-րով, սովորութիւններով, մտքի իմաստասիրական ուղղութեամբ, —կեանքն ու կեանքի իմաստը, նորա ձգտման վախճանակէտերը, հոգեկան սլացքները, կրօնը, երեակայական անդրաշխարհը, հաւա-տայիքները, նախադաշարժունքները, աւանդութիւնները՝ բանա-ւոր ու պատմական զրոյցները, երգերը՝ առածներն ու առակ-ները, խոգերը, հանդէսները, ծէսերը, տօնակատարութիւնները, բառերն ու լեզուակերտութիւնը ևայլն, ևայլն, կազմում են ազգա-գրական ուսումնասիրութեան նիւթ:

Արդ՝ որքան ճիշտ ամբարուած են այդ բոլորը մի ազգի գրա-կան գանձարանի մէջ, այնքան էլ գրական մշակները՝ որոնք դեգերվում են գիտութեան ու գեղարուեստի անդաստանի վրայ, առատ նիւթ կոնենան լմելու և ճախարակելու իրենց կերպա-գործող մասների մէջ, գտելու և ճշգրտելու և լայն ու բաւարար եզրակացութիւններ, հանելու ազգերի որը որից սերուելու, որը որի հետ և ինչ ու ինչով շողկապուած լինելու մասին:

Արեւելահայ նոր գրականութեան մէջ Պերճ Պոսեանը, որ իւր բազմաշխատ մահկանացուն կնքեց Բագու քաղաքում անցած նոյեմբերի 23 ին և որի թաղման սգահանդէսը կատարեցին այս դեկտեմբերի 2-ին Թիֆլիսում) թօշիվանքի գերեզմանոցում, ազգա-գրական նիւթ մատակարարողների մէջ երիցագոյներից մէկն էր: Իւր վէպերը պատկերացնում են յատկապէս Այրարատեան հայի նիստ ու կացից, սովորութիւններից, բարքերից, հանդէսներից, ծէսերից, նախադաշարժումներից և այլն բաւական բան: Արարա-տեան բարբոսով, Աշտարակցու (Ճաւարակցի ինքն էլ) լեզուին յատուկ տողերով է գրուած Սօս և Վարդիթերը:

Ուստի վիշտ ի սիրտ է արձանագրում Ազգագրական Հան-դէսը ընդհանրապէս հայ վիպագրողի և առանձնապէս հայ քաջ ժողովրդագէտի մահը: Կորուստը շատ աւելի փոստսալի է մեր աչքին մանաւանդ այնու, որ անցեալ դարի երիցագոյն աշխատա-ւորների, նոր գրականութեան խոշոր հիմնադիրների, ժողովրդա-

դէտ գործիչները և ժողովրդի հոգու և էութեան խորքից գրողները, ժողովրդի իսկական տիպն ու տիպարը ճշգրիտ գրողմով պատկերացնողների խոշոր գէժքերը երբ մէկը միւսի հետեից վերանում են մեզանից՝ տեղերը մնում են դատարկ:

Սակայն անյոյս չենք, թէ ազգագրութեան կարևոր նշանակութիւնը աչքի առաջ ունենալով, ունենալով նաև սրտի այն բնական թրթիւրը, որ զգում ենք՝ երբ մի գիտնական կամ մի շնորհալի ժողովող հանդիսացնում է մեր տեսութեան հանդէպ մեր պապերի յիշատակարաններից մի նշխար, չեն երևիլ մեզանում նոր ոյժեր՝ ազգագրականին նուիրուելու, որոնք, ամենայն յուսով հաւատում ենք, որ նախանձելով իրենց նախորդներին՝ կը ժամեն այս ու այն կողմ ժողովրդի մէջ, կը ժողովեն այն ամենը՝ նշմար ու նշխար հնութեան, հին արուեստի, հին բանահիւսութեան, հին քաղաքակրթութեան, որոնք ժամանակիս ամենափոխ հոսանքի տակ, զրսից խուռն գրոհ տուող ազգեցութիւնների ուժգնութիւնից, անհետ կորչելու են դատապարտուած, բացի նոցանից՝ որոնք արդէն գրի են առնուած և նոցանից՝ որոնք գետնի խորքերում են մնում թաղուած:

Նոցա ջանագործութեան նիւթ կը լինի այն, որ մեր նախնիքների ոգին շարահիւսել է, այն որ մեր ժողովուրդը կարողացել է բերնէ բերան աւանդելով իւր ծոցում ցայսօր պահպանել, և այն անգամ, որ մագաղաթների վրայ թէև գրի առնուած՝ բայց ո՞վ գիտէ ինչ խորշերում ու խրճիթներում խաւարի մէջ թաղուած և խոնաւից, փոշուց ու ցեցից եղծուելու է մատնուած. հուսկ այն ամէնը, որ մեր պապերը ճարտարակերտել են իրենց բներկրի ոճով ու գրողմով և այժմ աւերակեալ մնացորդներ են գիւղ և ք. ք. նրկնքի տակ կանգուն և կամ փուլքերում անթեղուած դանձ:

Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ

